ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1
№ ԷԱՃԱՊՁԲ-9/11-2 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 03 -ը ապրիլի 2019թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Մ. Ղամբարյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Գնորդ», մի կողմից և **«Թեոֆարմա» ՍՊԸ-ն**՝ ի դեմս ընկերության տնօրեն **Վ. Մակինյանի**, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, այսուհետև՝ «Վաճառող», երկուսը միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով **26.02.2019թ.** կնքված № ԷԱՃԱՊՁԲ-9/11-2 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.15 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

## 1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը, հիմք ընդունելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը՝ սահմանելով Ապրանքների գնման և վճարման ժամանակացույցեր՝ համաձայն Հավելված № 1-ի և 2-ի:

1.2 Վաճառողը պարտավորվում է սույն Համաձայնագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին(այսուհետև՝ Ստացող) մատակարարել՝ Պայմանագրի տեխնիկական բնութագրերով նախատեսված ապրանքներ (այսուհետև՝ Ապրանք)՝ համաձայն № 1 Հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար՝ վճարման ժամանակացույցով՝ հավելված N 2-ով, նախատեսված ժամանակահատվածում:

## 2. Գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է ***16,744,800 (տասնվեց միլիոն յոթ հարյուր քառասունչորս հազար ութ հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն***, որը ներառում է Համաձայնագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ նաև հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.3 կետով նախատեսված կարգով, բայց ոչ ուշ, քան 10.12.2019թ.:

## 3. Այլ պայմաններ

3.1 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման,Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4 Սույն Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Սույն Համաձայնագիրը կազմված է 2 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի N 1 և 2 Հավելվածները հանդիսանում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.6 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում **ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչությունը**:

## 4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | **«Թեոֆարմա» ՍՊԸ** |
| ք. Երևան Բագրևանդի 5 | **ք. Երևան, Դավիթ Բեկի 1 թղմ, 5 տուն** |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | **«ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ Մալաթիա մ/ճ** |
| Հ/Հ 900011144129 | **Հ/Հ 220250121997000** |
| ՀՎՀՀ 02522157 | **ՀՎՀՀ 02248584** |
| ՀՀ պաշտպանության նախարարության | **տնօրեն** |
| ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ | |
| Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ | Վ. ՄԱԿԻՆՅԱՆ |

Ս/ա - Կ. Փաշինյան Է/ - 0002017 16.

Հավելված N 1
N ԷԱՃԱՊՁԲ-9/11-2 պայմանագրին կից
N 1 Համաձայնագրի

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/հ | Ապրանքի անվանում | Չ/Մ | Քանակ | Միավորի գինը /դրամ/ | Ընդհանուր գումար /դրամ/ | Ապրանքների մատակարարումը 2019թ., ըստ համապատասխան եռամսյակների | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | 2-րդ եռամսյակ, | 3-րդ եռամսյակ, | 4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ, քան 29.11.19թ |
| 1. | Բենզիլպենիցիլինի նատրիում, benzylpenicillin sodium | հատ | 120,000 | 53 | 6,360,000 | | | 120,000 |
| 2. | Ցեֆտրիաքսոն, ceftriaxone | հատ | 60,000 | 118.08 | 7,084,800 | | 30,000 | 30,000 |
| 3. | Սևոֆլուրան: sevofluran | հատ | 50 | 66,000 | 3,300,000 | 25 | 25 | |
| Ընդամենը | | | | | 16,744,800 | | | |

Հավելված N 2
N ԷԱՃԱՊՁԲ-9/11-2 պայմանագրին կից
N 1 Համաձայնագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

| Հ/հ | Ապրանքի անվանում | CPV կոդ | Ընդհանուր գին ՀՀ /դրամ/ | Վճարումը նախատեսվում է իրականացնել 2019թ., համապատասխան ըստ ամիսների, այդ թվում՝ | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Ապրիլ | Մայիս | Հունիս | Հուլիս | Օգոստոս | Սեպտեմբեր | Հոկտեմբեր | Նոյեմբեր | Դեկտեմբեր, բայց ոչ ուշ, քան 10.12.19թ |
| 1. | **Բենզիլպենիցիլինի աղեր j01ce01** /Բենզիլպենիցիլինի նատրիում, benzylpenicillin sodium/ | 33651114/504 | 6,360,000 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 6,360,000 | 6,360,000 | 6,360,000 |
| 2. | **Ցեֆտրիաքսոն j01dd04** /Ցեֆտրիաքսոն, ceftriaxone/ | 33651118/504 | 7,084,800 | 0 | 0 | 0 | 3,542,400 | 3,542,400 | 3,542,400 | 7,084,800 | 7,084,800 | 7,084,800 |
| 3. | **Բժշկական օգնության միջոցներ** /Սևոֆլուրան: sevofluran/ | 33191580/537 | 3,300,000 | 1,650,000 | 1,650,000 | 1,650,000 | 3,300,000 | 3,300,000 | 3,300,000 | 3,300,000 | 3,300,000 | 3,300,000 |
| **Ընդամենը** | | | **16,744,800** | **1,650,000** | **1,650,000** | **1,650,000** | **6,842,400** | **6,842,400** | **6,842,400** | **16,744,800** | **16,744,800** | **16,744,800** |

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարության | «Մեդֆարմա» ՍՊԸ |
| ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ | |
| Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ | Վ. ՄԱԿԻՆՅԱՆ |